

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԸ

DOI: 10.52174/2579-2989_2022.1-65

Հիմնաբառեր. *Եվրոպական միության արդարադատության դատարան (ԵՄԱԴ), ԵՄ իրավական համակարգ, շրջադարձային քեյսեր, կանոնակարգեր, հրահանգներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)*

Հոդվածում տեղ են գտել Եվրոպական միության արդարադատության դատարանի (ԵՄԱԴ) շրջադարձային որոշումները, որոնք շոշափելի ազդեցություն են ունեցել եվրոպական ինտեգրման խորացման և ամրապնդման վրա: Սակայն, եվրոպական իրավական համակարգի վերաբերյալ առավել լավ պատկերացում կազմելու համար նախ՝ ներկայացվել են եվրոպական իրավական համակարգի առանձնահատկություններն ու ԵՄԱԴ-ի կառուցվածքը: Հոդվածն ամփոփվել է ԵՄԱԴ-ի գործունեությունը կաշկանդող և սահմանափակող հանգամանքների քննարկմամբ:

Տնտեսական միություններում ինտեգրման գործընթացների պատմությունն ու ամրությունը վերլուծելիս առավելապես ուշադրություն է դարձվում տնտեսական և քաղաքական գործոններին: Եվրոպական միությունը (ԵՄ) դեռևս ամենախոր և ամենալայն ինտեգրացիոն միավորումն է, և այդ գործում իր ուրույն դերն է ունեցել եվրոպական իրավական մշակույթը, որտեղ գերակայում են իրավական ակտերի բազմազանությունն ու մանրամասն շարադրանքը: Այդ ամենն արտացոլված է ԵՄ և յուրաքանչյուր այլ ինտեգրացիոն կառույցի իրավարար փաստաթղթերի համեմատական վերլուծության մեջ: Օրինակ՝ ԵՄ լիսաբոնյան համաձայնագիրը շարադրված է մի քանի հարյուր, մինչդեռ օրինակ՝ Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիայի կանոնադրության հիմնական 55 հոդվածները՝ ընդամենը 36 էջում: Եվրոպական երկրներին բնորոշ է նաև իրավահպատակությունը: Եվ ամենևին պատահական չէ, որ հենց հին աշխարհամասի



Ալբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ

2012 թ. ավարտել է ՀՊՏՀ բալավակրիաբը՝ տնտեսագիտության տնտեսագիտության տնտեսագիտության մասնագիտությամբ: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում ստացել է տնտեսագիտության մագիստրոսի որակավորում՝ «Մենեջմենթ» մասնագիտությամբ, 2017 թ.՝ տնտեսագիտության թեկնածուի գիտական ասպիրանտ: 2018 թ.-ից դասավանդում է ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում: Հեղինակ է 12 գիտական հոդվածների:

 <https://orcid.org/0000-0003-1029-3620>

երկրներն են տակավին վերջերս՝ 20-րդ դարի 2-րդ կեսին, իրենց ինքնիշխանությունը մասամբ փոխանցել վերագրային մարմիններին՝ համաձայնելով ենթարկվել վերջիններիս մշակած «խաղի կանոններին»: Իսկ որո՞նք են այդ «խաղի կանոնները»: Անդրադառնանք եվրոպական իրավական համակարգին:

ԵՄ իրավունքի աղբյուրները երեքն են՝ առաջնային (primary law), երկրորդային (secondary law) և քեյս (իրավիճակային) իրավունք (case law): Առաջնային իրավունքի աղբյուրները ներառում են լիսաբոնյան համաձայնագիրը, ԵՄ անդամ պետությունների՝ ԵՄ-ին անդամակցության մասին պայմանագրերը կամ, այլ կերպ ասած, իրավական փաստաթղթերի ողջ փաթեթը, որ մշակել են ոչ թե ԵՄ ինստիտուտները, այլ անդամ երկրները: Դրանք ԵՄ հիմնարար փաստաթղթերն են: Երկրորդային օրենքները ԵՄ ինստիտուտների ընդունած օրենքներն են: Դրանք, որպես կանոն, լինում են երկու տեսակի՝ կանոնակարգեր (regulations) և հրահանգներ (directives): ԵՄ-ում օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու բացառիկ իրավունքը վերապահված է ԵՄ հանձնաժողովին, մինչդեռ օրենսդրին վերապահված է ԵՄ հանձնաժողովի ներկայացրած օրենսդրական նախագծերի ընդունումը կամ մերժումը: Սովորական օրենսդրական ընթացակարգի պարագայում (ordinary legislative procedure) ԵՄ օրենսդիրը ԵՄ նախարարների խորհուրդն է ու ԵՄ խորհրդարանը, որոնց համատեղ որոշումից հետո է միայն ուժի մեջ մտնում ԵՄ հանձնաժողովի ներկայացրած օրենսդրական նախագիծը: Մինչդեռ հատուկ օրենսդրական ընթացակարգի (Special legislative procedure) պարագայում ԵՄ նախարարների խորհուրդը միայնակ է հաստատում կամ մերժում օրինագիծը: Ընթացակարգի ընտրությունը կախված է ոլորտից և կարգավորվում է լիսաբոնյան համաձայնագրով: Հավելենք նաև, որ կանոնակարգերը ենթակա են ուղղակի կատարման, որոնց կարելի է հղում անել դատական գործընթացների ժամանակ, մինչդեռ հրահանգը գործողությունների շրջանակ

է, և անդամ պետությունները պետք է համապատասխանեցնեն հրահանգներն իրենց ներպետական օրենսդրություններում (transposition): Քեյս իրավունքը ձևավորվում ու զարգանում է ԵՄ-ի վճիռների արդյունքում: ԵՄ բոլոր իրավական փաստաթղթերի ամբողջությունը կոչվում է EU *acquis communautaire*:

ԵՄԱԴ-ը կազմված է 27 դատավորներից (1 դատավոր՝ յուրաքանչյուր երկրից) և 8 գլխավոր դատախազներից (Advocate general): Գլխավոր դատախազի ինստիտուտը, որը ներշնչվել է ֆրանսիական իրավական մշակույթից, յուրաքանչյուր քեյսի (իրավիճակի) վերաբերյալ տալիս է եզրակացություն, որը դատարանը, թեպետ պարտավոր չէ, սակայն, որպես կանոն, որոշումներ ընդունելիս հաշվի է առնում: Դատավորներն ընտրվում են 6 տարի ժամկետով՝ վերընտրության իրավունքով:

Անհատը կամ կազմակերպությունը չի կարող դիմել ԵՄԱԴ, այլ միայն ներպետական դատարանը: Ընթացակարգը հետևյալն է. անհատը կամ կազմակերպությունը դիմում է ներպետական դատարան: Եթե հարցն առնչվում է եվրոպական իրավունքին, ապա ներպետական դատարանը պետք է դիմի ԵՄԱԴ՝ վերջինից ցումներ ստանալու համար (procedure of referral): ԵՄԱԴ-ում միմյանց դեմ կարող են հայց ներկայացնել ինչպես պետությունները, այնպես էլ ԵՄ տարբեր ինստիտուտներ: ԵՄ պատմությունը լի է դեպքերով, երբ ԵՄ որևէ ինստիտուտ հայց է ներկայացնում անդամ երկրներից մեկի կամ միանգամից մի քանիսի դեմ կամ հակառակը, կամ էլ ինստիտուտներն են միմյանց դեմ հայցեր ներկայացնում (հնարավոր է՝ երկիրը/ինստիտուտը միաժամանակ հայց ներկայացնի մի քանի երկրների/ինստիտուտների դեմ): ԵՄԱԴ-ը բաղկացած է երկու ատյաններից. ստորին ատյանն Ընդհանուր դատարանն է (General Court), իսկ վերինը՝ Արդարադատության դատարանը (Court of Justice)²:

Ստորև դիտարկենք այն բոլոր նախադեպային քեյսերը, որոնք շրջադարձային են եղել եվրոպական ինտեգրման պատմության մեջ:

¹ Dinan, Desmond, 2010. *Ever Closer Union: An Introduction to European Integration*. London: Red Globe Press, pp. 265-273.

² Hodson, D. and Peterson, J. eds., 2017. *The institutions of the European Union*. Oxford: Ch. 7. Oxford University Press.

Շրջադարձային քեյս 1.*Van Gend en Loos v Nederlandse Administratie der Belastingen (1963) Case 26/62³*

Վան Գանդ էն Լուսը 1809 թ.-ին հիմնադրված և բեռների առաքմամբ զբաղվող նիդեռլանդական ընկերություն էր, որը 2003 թ.-ին ձեռք բերեց ոլորտի առաջատարներից մեկը՝ DHL-ը: Ընկերությունը 1962 թ.-ին մետաղ էր ներմուծել Արևմտյան Գերմանիայից, իսկ Նիդեռլանդների իշխանությունը որոշել էր մաքսատուրք կիրառել ընկերության նկատմամբ: Վերջինս վիճարկել էր Նիդեռլանդների իշխանության որոշումը՝ վկայակոչելով Հռոմի համաձայնագրի 12-րդ հոդվածը (ներկայիս Լիսաբոնյան համաձայնագրի «ԵՄ գործունեության մասին» պայմանագրի 30-րդ հոդվածը), համաձայն որի՝ երկրները պետք է ձեռնպահ մնան ներմուծվող ու արտահանվող ապրանքատեսակների վրա նոր հարկատեսակներ ավելացնելուց կամ գործող հարկատեսակները բարձրացնելուց: Դատարանը բավարարեց ընկերության հայցը՝ պարտավորեցնելով Նիդեռլանդների կառավարությանը վերադարձնել վճարած մաքսատուրքը: Այս վճիռը շրջադարձային էր և նախադեպային հետևյալ տեսանկյուններից. նախ՝ դատարանը պատճառաբանեց, որ Հռոմի պայմանագրի բավականաչափ հստակ կանոններն ուղղակիորեն կիրառելի են և կարող են վկայակոչվել անդամ պետությունների ներպետական դատարանների առջև կամ, այլ կերպ ասած, ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք կարող են անդամ պետությունների դեմ հայցեր ներկայացնել (direct effect): Բացի այդ, նշյալ նախադեպային գործով ԵՄ-ն (այն ժամանակ դեռ՝ Եվրոպական համայնքները) դարձավ ինքնավար իրավական համակարգ (autonomous legal order), ինչը նշանակում է, որ այդուհետ ինքն է որոշելու, թե ԵՄ օրենսդրությունն ինչպես և ինչ չափով պետք է կիրառվի անդամ պետությունների ներպետական օրենսդրություններում:

Շրջադարձային քեյս 2.*Flaminio Costa v. Enel⁴*

Ֆլամինո Կոստան Իտալիայի քաղաքացի էր, որը «Edisonvolta» ընկերությունում բաժնետոմսեր ուներ և դեմ էր Իտալիայի էներգետիկայի շուկայի ազգայնացմանը: Կոստան դիմեց Միլանի երկու տարբեր դատարաններ, որպեսզի վերջիններս հավաստեն, որ իր էլեկտրաէներգիայի վճարի հասցեատերն ազգայնացված «Edisonvolta» ընկերությունն է, այլ ոչ թե նորաստեղծ «Enel»-ը: Կոստայի պնդմամբ, ընկերության մասնավորեցումը եվրոպական իրավունքի և Իտալիայի սահմանադրության խախտում էր: Արդյունքում, Միլանի դատարաններից մեկը գործն ուղարկեց ԵՄԱԴ, իսկ մյուսը՝ Իտալիայի Սահմանադրական դատարան: Ըստ Սահմանադրական դատարանի վճռի՝ թեպետ Եվրոպական համայնքները, որպես վերազգային մարմին, ունեն որոշակի ինքնավարություն, այդուհանդերձ, պետք է գործի «յուրաքանչյուր հաջորդ օրենքը չեղարկում է նախորդը (lex posterior derogat legi priori)» սկզբունքը: Ուստի, Հռոմի համաձայնագիրը, որն Իտալիայի օրենսդրությունում ինկորպորացվել է 1958 թ.-ին, չի կարող գերակայել 1962 թ.-ին ընդունված օրենքի նկատմամբ: Մինչդեռ ԵՄԱԴ որոշումն աննախադեպ էր: Ըստ ԵՄԱԴ-ի՝ Եվրոպական համայնքների իրավունքը տարբերվում է միջազգային պայմանագրերից, քանի որ անդամ երկրները ստեղծել են անժամկետ միություն՝ իր ինստիտուտներով ու իրավական համակարգով հանդերձ՝ որոշակի ոլորտներում սահմանափակելով իրենց ինքնիշխանությունը: Ուստի, Հռոմի համաձայնագրից բխող օրենքն իրավունքի ինքնուրույն և անկախ աղբյուր է, որը չի կարող չեղարկվել՝ ներպետական օրենսդրության ընդունմամբ կամ փոփոխությամբ պայմանավորված: Այս նախադեպային որոշմամբ ԵՄԱԴ-ը սահմանեց **ներպետական օրենսդրության նկատմամբ ԵՄ օրենսդրության գերակայությունը:**

³ Judgment of the Court of 5 February 1963. - NV Algemene Transport- en Expeditie Onderneming van Gend & Loos v Netherlands Inland Revenue Administration. - Reference for a preliminary ruling: Tariefcommissie - Pays-Bas. - Case 26-62, available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61962CJ0026>

⁴ Judgment of the Court of 15 July 1964., Flaminio Costa v E.N.E.L., Reference for a preliminary ruling: Giudice conciliatore di Milano - Italy. Case 6-64, available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61964CJ0006>

Շրջադարձային քեյս 3.

Internationale Handelsgesellschaft mbH v Einfuhr- und Vorratsstelle für Getreide und Futtermittel (1970) Case 11/70⁵

ԵՄ միասնական գյուղատնտեսական քաղաքականությունը նախատեսում է, որ արտահանողը պետք է ունենա արտոնագիր, որը ստանալու համար պետք է որոշակի գումար թողնի՝ որպես գրավ (դեպոզիտ): Եթե արտահանողն արտահանման արտոնագրի վավերության ժամկետի ընթացքում ապրանք չէր արտահանում, ապա նշյալ գումարը չէր վերադարձվում: Հայցվորները, որոնք եգիպտացորենի արտահանման արտոնագիր ունեին, ապրանքներ չէին արտահանել և կորցրել էին գրավադրված գումարը: Նրանք վիճարկեցին այդ որոշումը՝ պնդելով, որ խախտվել է Գերմանիայի սահմանադրությամբ երաշխավորված՝ ազատ բիզնես գործունեություն ծավալելու իրենց իրավունքը: Գերմանիայի վարչական դատարանը դիմեց ԵՄԱԴ: Վերջինս վճռեց, որ թեպետ ԵՄ օրենսդրության ստեղծումը ներշնչվել է անդամ պետությունների սահմանադրական ավանդույթներով, այդուհանդերձ, դա չի կարող վիճարկվել ազգային հիմնարար իրավունքներին կամ սահմանադրական հիմունքներին հակասելու հիմքով: Ուստի կարող ենք պնդել, որ սույն նախադեպային որոշմամբ ԵՄԱԴ-ն արձանագրեց ԵՄ օրենսդրության գերակայությունն անդամ պետությունների սահմանադրությունների նկատմամբ:

Շրջադարձային քեյս 4.

Van Duyn v Home Office (1974) C-41/74⁶

Վան Դույնը Նիդեռլանդների քաղաքացի էր, որը ցանկանում էր աշխատել Մեծ Բրիտանիայում կրոնական գործու-

նեություն ծավալող մի կազմակերպությունում: Բրիտանական իշխանություններն արգելել էին վերջինիս մուտքը՝ պնդելով, որ կրոնական կառույցի գործունեությունը հանրության համար վտանգ է ներկայացնում: Վան Դույնը դիմեց ԵՄԱԴ՝ պնդելով, որ խախտվել են ԵՄ խորհրդի ընդունած՝ 64/221 որոշմամբ սահմանված իր իրավունքները: Միացյալ Թագավորության կառավարության կարծիքով, հրահանգը չէր կարող ուղղակիորեն վկայակոչվել դատարանի առջև: Մինչդեռ ԵՄԱԴ-ն այլ տեսակետ ուներ. ԵՄ անդամ պետության քաղաքացու հանդեպ հանրային անվտանգության նկատառումներով մուտքի արգելքի արդարացումը հնարավոր էր միայն՝ հիմք ընդունելով անհատի, այլ ոչ թե կրոնական կազմակերպության վարքագիծը: Ավելին, ԵՄԱԴ-ի կարծիքով, դատարանի առաջ հրահանգի վկայակոչման անհնարինությունը վերջինիս իրավական պարտադիր բնույթի հետ անհամատեղելի է: Բացի այդ, վկայակոչման անհնարինությունը ենթադրում է հրահանգի արդյունավետ կիրառման (effet utile) նվազեցում: Այս քեյսը շրջադարձային էր նրանով, որ ԵՄԱԴ-ը պետության ու մասնավոր սուբյեկտի հարաբերություններում **սահմանեց չափորոշիչներ⁷, որոնց առկայության պարագայում թույլատրելի է հրահանգի՝** ԵՄԱԴ-ի առջև ուղղակիորեն վկայակոչումը (direct effect of directive): Քեյսը, անշուշտ, նախադեպային դարձավ:

Շրջադարձային քեյս 5.

Paola Faccini Dori v Recreb Srl (1994) C-91/92⁸

Ինչպես նշեցինք նախորդ իրավիճակի առնչությամբ, ԵՄ հրահանգները պետու-

⁵ Judgment of the Court of 17 December 1970. Internationale Handelsgesellschaft mbH v Einfuhr- und Vorratsstelle für Getreide und Futtermittel., Reference for a preliminary ruling: Verwaltungsgericht Frankfurt am Main - Germany., Case 11-70, available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61970CJ0011>

⁶ Judgment of the Court of 4 December 1974. Yvonne van Duyn v Home Office. Reference for a preliminary ruling: High Court of Justice, Chancery Division - United Kingdom. Public policy, Case 41-74, available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61974CJ0041>

⁷ 1. Հրահանգը գրված է բավականաչափ հստակ լեզվով, 2. հրահանգը սահմանված ժամկետում չի ներառվել ԵՄ անդամ պետության ազգային օրենսդրության մեջ, 3. հրահանգի դրույթներն ազգային իրավական համակարգում ճիշտ ձևով ի կատար չեն ածվում:

⁸ Judgment of the Court of 14 July 1994. Paola Faccini Dori v Recreb Srl. Reference for a preliminary ruling: Giudice conciliatore di Firenze - Italy. Consumer protection in the case of contracts negotiated away from business premises - Availability in disputes between private individuals. Case C-91/92, available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61992CJ0091>

թյուն-մասնավոր սուբյեկտ հարաբերությունների կամ, այլ կերպ ասած, ուղղահայաց հարաբերությունների պարագայում կարող են ուղղակիորեն վկայակոչվել ԵՄԱԴ-ի առջև: Իսկ ինչ դեր ունեն ԵՄ հրահանգները հորիզոնական՝ անհատ-անհատ կամ անհատ-մասնավոր ընկերություն հարաբերություններում: Այս հարցը քննարկվել է Faccini Dori v Recreb նախադեպային իրավիճակի ժամանակ: Ֆաչինի Դորին լեզվի դասընթացների գրանցման վերաբերյալ պայմանագիր էր ստորագրել Միլանի կենտրոնական երկաթուղային կայարանում: ԵՄ 85/577/EEC հրահանգի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի 7 օրվա ընթացքում լուծելու պայմանագիրը, եթե դա կնքվել է ընկերության գրասենյակից դուրս: Սակայն, Իտալիան այդ հրահանգը չէր ինտեգրել իր ներպետական օրենսդրությանը: Ըստ ԵՄԱԴ-ի՝ ԵՄ ընդունած հրահանգը չի կարող կիրառվել հորիզոնական հարաբերությունների պարագայում: Հենց այստեղ է կանոնակարգի ու հրահանգի էական տարբերությունը: Կանոնակարգը պարտադիր է բոլորի համար, մինչդեռ հրահանգը՝ միայն անդամ պետությունների, հետևաբար՝ երրորդ անձինք՝ տվյալ դեպքում լեզվի ուսուցման կենտրոնը, չեն կարող պատասխանատվություն կրել միայն նրա համար, որ անդամ պետությունը՝ տվյալ դեպքում Իտալիան, իր ներպետական օրենսդրություն չի ներառել ԵՄ ընդունած հրահանգը: Այդուհանդերձ, ըստ ԵՄԱԴ-ի պատճառաբանության, թեպետ հրահանգը հորիզոնական հարաբերություններում չունի ուղղակի կիրառելիություն, սակայն այն կարող է ունենալ անուղղակի կիրառելիություն: Դորին կարող էր Իտալիայի ներպետական դատարանում հայց ներկայացնել իտալական կառավարության

դեմ՝ փոխհատուցում պահանջելով, իսկ նմանատիպ դեպքերում տեղական դատարանը պետք է օրենքը մեկնաբանի այնպես, որ դա բխի ԵՄ ընդունած հրահանգի տառից ու ոգուց: Այս տրամաբանությունը ԵՄԱԴ-ը հաստատեց 1991 թ.-ին մեկ այլ շրջադարձային քեյսով՝ Francovich v Italy (1991) C-6/90⁹: Իտալիան չէր կատարել ԵՄ 80/987 հրահանգով ստանձնած իր պարտականությունները՝ գործատուի անվճարունակության պարագայում աշխատողների շահերի պաշտպանություն և աշխատողներին՝ պետական միջոցներից գործատուի կողմից վճարման ենթակա գումարների վճարում: Ըստ այդմ՝ դատարանը վճռեց, որ այն հանգամանքը, որ Իտալիան չի կատարել հրահանգը՝ իր օրենսդրության մեջ ներառել իր օրինական պարտավորությունը, չի կարող վերջինիս ազատել ԵՄ նշյալ հրահանգով նախատեսված պարտավորությունների կատարումից: 1996 թ.-ին, ըստ մեկ այլ շրջադարձային քեյսի (Brasserie du Pêcheur v Germany C-46/93¹⁰), ԵՄԱԴ-ը սահմանեց այն երեք պայմանները, որոնց առկայության պարագայում պետությունը պատասխանատու է ԵՄ օրենսդրության խախտման համար: Այդ պայմաններն են.

- խախտված օրենքն անհատներին օժտում է որոշակի իրավունքներով,
- խախտումը բավարար չափով լուրջ է,
- խախտման և վնասի միջև առկա է ուղիղ կապ:

Շրջադարձային քեյս 6.

*Cassis de Dijon (Rewe-Zentral v Bundesmonopolverwaltung für Branntwein (1979) Case C-120/78)*¹¹

Rewe-ն խմիչքների առևտրով զբաղվող գերմանական ընկերություն էր, որը Ֆրանսիայից Գերմանիա էր ներմուծում Crème

⁹ Judgment of the Court of 19 November 1991. Andrea Francovich and Danila Bonifaci and others v Italian Republic. Reference for a preliminary ruling: Pretura di Vicenza and Pretura di Bassano del Grappa - Italy. Failure to implement a directive - Liability of the Member State. Joined cases C-6/90 and C-9/90. European Court Reports 1991 I-05357 ECLI identifier: ECLI:EU:C:1991:428, available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61990CJ0006>

¹⁰ Judgment of the Court of 5 March 1996. Brasserie du Pêcheur SA v Bundesrepublik Deutschland and The Queen v Secretary of State for Transport, ex parte: Factortame Ltd and others. References for a preliminary ruling: Bundesgerichtshof - Germany and High Court of Justice, Queen's Bench Division, Divisional Court - United Kingdom. Principle of Member State liability for damage caused to individuals by breaches of Community law attributable to the State - Breaches attributable to the national legislature - Conditions for State liability - Extent of reparation. Joined cases C-46/93 and C-48/93, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61993CJ0046>

¹¹ Judgment of the Court of 20 February 1979. Rewe-Zentral AG v Bundesmonopolverwaltung für Branntwein. Reference for a preliminary ruling: Hessisches Finanzgericht - Germany. Measures heaving an effect equivalent to quantitative restrictions. Case 120/78, available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61978CJ0120>

de cassis լիկյորը: Գերմանական կարգավորումների համաձայն՝ լիկյորը պետք է պարունակեր առնվազն 25% ալկոհոլ, մինչդեռ նշյալ խմիչքի մեջ ալկոհոլի պարունակությունը 15-20% էր: Գերմանիայի ֆինանսների նախարարությունը Rewe ընկերությանը տեղեկացրեց, որ խմիչքը Գերմանիայում չի կարող վաճառվել՝ որպես լիկյոր: Ընկերությունը, վկայակոչելով Հռոմի համաձայնագրի 30-րդ հոդվածը, դիմեց դատարան: ԵՄԱԴ-ի կարծիքով, Գերմանիայի կառավարության քայլը հավասարազոր էր ներմուծման քանակական սահմանափակման: Գերմանիայի կառավարությունը, սակայն, հակադարձեց՝ մեջբերելով հանրային առողջությանն ու արդար մրցակցությանն առնչվող փաստարկեր: Դատարանը հոգուտ ընկերության վճիռ կայացրեց, որը դարձավ նախադեպային: Համաձայն Cassis de Dijon քեյսի՝ սահմանվեց ապրանքների փոխադարձ ճանաչումը, այսինքն՝ եթե կամայական ապրանքը ԵՄ անդամ արտադրող պետությունում արտադրված և ճանաչված է որպես «Ա» ապրանք, ապա ԵՄ անդամ ներմուծող երկիրն այն պարտավոր է ընդունել ու ճանաչել որպես «Ա» ապրանք, նույնիսկ այն պարագայում, երբ, ըստ ներմուծող երկրի օրենսդրության, ներմուծված ապրանքը համապատասխանում է «Բ» ապրանքի հատկանիշներին: Այդուհանդերձ, հավելենք, որ Լիսաբոնյան համաձայնագրի «ԵՄ գործունեության մասին» պայմանագրի 36-րդ հոդվածն անդամ երկրներին թույլ է տալիս սահմանափակել կամ արգելել մեկ այլ անդամ երկրից իրականացվող ներմուծումը ԵՄ-ի ներսում՝ հանրային կյանքի, առողջության ու բարոյականության, մարդու, կենդանիների կամ բույսերի կյանքի, ինչպես նաև մշակութային, պատմական և հնագիտական արժեքների պաշտպանությամբ պայմանավորված¹²:

Շրջադարձային քեյս 7.

*Grzelczyk v Centre Public d'Aide Sociale d'Otignies-Louvain-la-Neuve (2001) C-184/99*¹³

Ռուդի Գոզելչիկը Բելգիայում ուսում ստացող ֆրանսիացի ուսանող էր: Ուսման վերջին տարում ֆինանսական վիճակի վատթարացման պատճառով նա դիմում է բելգիական իշխանություններին՝ ստանալու նվազագույն եկամուտ (minimal income): Բելգիական իշխանությունը մերժում է՝ պատճառաբանելով, որ վերջինս Բելգիայի քաղաքացի չէ: Գոզելչիկը դիմում է ԵՄԱԴ՝ պնդելով, որ խախտվել են իր՝ ԵՄ 93/96 հրահանգով, ինչպես նաև լիսաբոնյան համաձայնագրով սահմանված իրավունքները: Նշյալ հրահանգը, սակայն, պահանջում էր, որպեսզի ուսանողը բավարար ֆինանսական միջոցներ ունենա: ԵՄԱԴ-ը վճռում է՝ չնայած հրահանգը պահանջում է, որ ուսանողը բավարար ֆինանսական միջոցներ ունենա, այնուամենայնիվ, դա չի խոչընդոտում ուսանողի՝ սոցիալական օգնություն ստանալու իրավունքը: Ավելին, ԵՄԱԴ-ի համոզմամբ, խախտվել էին Գոզելչիկի, ըստ լիսաբոնյան համաձայնագրի, քաղաքացիների հանդեպ ոչ խտրական վերաբերմունք սահմանող հոդվածով (TFEU, Art. 21) նախանշված իրավունքները: Ուստի, համաձայն ԵՄԱԴ-ի վճռի, Բելգիան պարտավոր էր սոցիալական օժանդակություն ցուցաբերել Գոզելչիկին: **Այս քեյսը շրջադարձային է նրանով, որ ԵՄ անդամ յուրաքանչյուր երկրի քաղաքացու հնարավորություն տալիս օգտվելու ԵՄ մեկ այլ անդամ պետության սոցիալական ապահովության երաշխիքներից՝ հետևյալ երկու նախադրյալների առկայության դեպքում.**

- ռեզիդենտություն,
- բավարար ամուր կապ քաղաքացու և հյուրընկալող երկրի միջև:

¹² Consolidated version of the Treaty on the Functioning of the European Union PART THREE - Union Policies and Internal Actions, Title II - Free Movement of Goods, Chapter 3 - Prohibition of Quantitative Restrictions between Member States, Article 36 (Ex Article 30 Tec), available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A12016E036>

¹³ Judgment of the Court of 20 September 2001. Rudy Grzelczyk v Centre public d'aide sociale d'Otignies-Louvain-la-Neuve. Reference for a preliminary ruling: Tribunal du travail de Nivelles - Belgium Articles 6, 8 and 8a of the EC Treaty (now, after amendment, Articles 12 EC, 17 EC and 18 EC) - Council Directive 93/96/EEC - Right of residence for students - National legislation which guarantees a minimum subsistence allowance only for nationals, persons covered by Regulation (EEC) No 1612/68 and stateless persons and refugees - Foreign student who has met his own living expenses during the first years of his studies. Case C-184/99, available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61999CJ0184>

Օտարերկրացիները՝ ԵՄԱԴ-ի ընդունած որոշումների շահառու

ԵՄԱԴ-ի որոշումներից փորձել են օգտվել նաև արտասահմանցիները, նույնիսկ այն մարդիկ, ովքեր մեղադրվել են ահաբեկչությանն աջակցելու մեջ: Եվ այսպես՝ 2001 թ.-ի սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչական հայտնի գործողություններից հետո ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը բանաձև ընդունեց, որով, հղում անելով ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխին, անդամ պետություններից պահանջում էր սառեցնել «Թալիբան» շարժման և Ուսամա բեն Լադենի հետ կապված անձանց հաշիվները: ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերից բխող կանոնակարգ ընդունեց նաև ԵՄ-ն, որին հետևեց Շվեդիան, որի ռեզոլյուցիան էր ծագումով Սաուդյան Արաբիայից Յասին Աբդուլա Կադին: Հայցվորները՝ Կադին և Սոմալիի փախստականների հարցերով բարեգործական ընկերության ղեկավար ալ Բարաքատը, պնդում էին, որ խախտվել են իրենց հիմնարար իրավունքները¹⁴: ԵՄ դատարանի գլխավոր դատախազի կարծիքով, ՄԱԿ-ի ԱԽ որոշումները և դրանցից բխող ԵՄ կանոնակարգի դրույթները պետք է կատարվեն անառարկելիորեն: Այդ կարծիքին էր նաև ԵՄԱԴ ընդհանուր դատարանը: Սակայն, հայցվորներն այդքանով չբավարարվեցին՝ բողոքարկելով վճիռը ԵՄԱԴ-ի երկրորդ ատյանում: Ըստ ԵՄԱԴ-ի վերջնական վճիռի՝ վերջինս իրավասու չէ որոշումներ կայացնելու ՄԱԿ-ի ԱԽ որոշումների վերաբերյալ, սակայն կարող է որոշել ԵՄ կանոնակարգի իրավականու-

թյունը: Դիցուք, միջազգային իրավունքի տեսանկյունից, ՄԱԿ-ի կանոնադրությունը բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող միջազգային փաստաթուղթ է, որին հղում արված ԱԽ որոշումը, ըստ տրամաբանության, պետք է գերակա լինի ԵՄ օրենսդրության նկատմամբ: Սակայն, ըստ ԵՄԱԴ-ի, ԵՄ-ի համար դա կարող է գերակայություն լինել այնքան ժամանակ, քանի դեռ անդամ պետությունները և/կամ ԵՄ այլ ինստիտուտներ կարող են վիճարկել ԵՄ օրենսդրության իրավակա-նությունը: Ուստի Կադիի վերաբերյալ ընդունած որոշումը ԵՄԱԴ-ը չեղյալ հայտարարեց, ինչը ոչ միայն եվրոպական, այլև միջազգային իրավունքի պատմության մեջ բացառիկ իրավիճակ է: Ըստ ԵՄԱԴ-ի՝ թեպետ ՄԱԿ-ի կանոնադրությունն իրավական առումով պարտադիր է ԵՄ-ի համար, այն չի կարող պարտադիր լինել ԵՄ համակարգի սահմանադրական հիմքերի և ԵՄ սահմանադրական նշանակություն ունեցող փաստաթղթերի նկատմամբ¹⁵:

Մեկ այլ հայտնի քեյսի «հերոս» էր իսպանական «Տեներիֆե» ֆուտբոլային ակումբի ֆուտբոլիստ, ազգությամբ ռուս Իգոր Սիմուտենկովը¹⁶: Իսպանիայում բնակվող ռուսաստանցի ֆուտբոլիստն ուներ ապրելու և աշխատելու իրավունք, սակայն Իսպանիայի ֆուտբոլի ֆեդերացիան պնդում էր, որ ֆուտբոլային ակումբներում օտարերկրացիների համար հատուկ սահմանաբաժին է սահմանված, որը գերազանցել չեն կարող: Մասնավորապես, ըստ այդ ժամանակ գործող կարգի, ֆուտբոլային դաշտում միաժամանակ չէին կա-

¹⁴ Joined Cases C-402/05 P and C-415/05 P: Judgment of the Court (Grand Chamber) of 3 September 2008 — Yassin Abdullah Kadi, Al Barakaat International Foundation v Council of the European Union, Commission of the European Communities, United Kingdom of Great Britain and Northern Ireland (Common foreign and security policy (CFSP) — Restrictive measures directed against persons and entities associated with Usama bin Laden, the Al-Qaeda network and the Taliban — United Nations — Security Council — Resolutions adopted under Chapter VII of the United Nations Charter — Implementation within the Community — Common Position 2001/154/CFSP — Regulation (EC) No 881/2002 — Measures directed at persons and entities included in a list drawn up by a body of the United Nations — Freezing of funds and economic resources — Committee of the Security Council established by paragraph 6 of Resolution 1267 (1999) of the Security Council (Sanctions Committee) — Inclusion of those persons and entities in Annex I to Regulation (EC) No 881/2002 — Actions for annulment — Competence of the Community — Joint legal basis of Articles 60 EC, 301 EC and 308 EC — Fundamental rights — Right to respect for property, right to be heard and right to effective judicial review), available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62005CA0402>

¹⁵ Այս համատեքստում, որպես հետազոտող, կարծում եմ՝ գլխավոր դատախազի փաստարկներն ու ԵՄԱԴ-ի առաջին ատյանի ընդունած վճիռն ավելի տրամաբանական են:

¹⁶ Judgment of the Court (Grand Chamber) of 12 April 2005. Igor Simutenkov v Ministerio de Educación y Cultura and Real Federación Española de Fútbol. Reference for a preliminary ruling: Audiencia Nacional - Spain. Communities-Russia Partnership Agreement - Article 23(1) - Direct effect - Conditions relating to employment Principle of non-discrimination - Football - Limit on the number of professional players having the nationality of non-member countries who may appear on a team in a national competition. Case C-265/03, available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62003CJ0265>

րող լինել ավելի քան երեք լեզուներն էր և երկու հպատակագրված (naturalized) ֆուտբոլիստներ: Սիմոտենկովը դիմեց դատարան՝ պնդելով, որ խախտվել է ԵՄ-ի ու ՌԴ-ի միջև կնքված գործընկերության և համագործակցության պայմանագրով սահմանված՝ խտրական վերաբերմունքի չենթարկվելու իր իրավունքը: Ի վերջո, նա շահեց Իսպանիայի կրթության և մշակույթի նախարարության դեմ ներկայացված հայցը, ինչը ռուս ֆուտբոլիստներին ազատեց խտրականության ենթարկվելու հեռանկարից: Հավելենք, որ ԵՄԱԴ-ի պատմության մեջ բազմաթիվ են եղել դեպքերը, երբ ոչ ԵՄ քաղաքացիները, դիմելով ԵՄԱԴ, կարողացել են վերականգնել իրենց խախտված իրավունքները:

ԵՄԱԴ - ՄԻԵԴ հարաբերություններ

Հին աշխարհամասում գործող միջազգային կազմակերպությունների ինստիտուցիոնալ «ճարտարապետությունը» խրթին է ու բազմաճյուղ: Այդ իսկ պատճառով հաճախ է շփոթմունք առաջանում ԵՄ ինստիտուտ ԵՄԱԴ-ի և Եվրոպայի խորհրդի (ԵԽ) ինստիտուտ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի միջև: Փորձենք հասկանալ՝ կամ, արդյոք, որևէ փոխառնչություն նշյալ ինստիտուտների միջև, և եթե այո, ապա ինչպիսին է դա:

Նախ՝ նշենք, որ երկու դատարանները միմյանցից անկախ են: Սակայն, 2014 թ.-ին ԵՄ հանձնաժողովը ԵՄԱԴ-ին խնդրեց կարծիք տալ առ այն, թե արդյոք ԵՄ-ի և Եվրոպայի խորհրդի միջև կնքվելիք համաձայնագրի նախագիծը, համաձայն որի՝ ԵՄ-ն անդամակցում է ԵԽ-ին, համատեղելի է ԵՄ մայր օրենքի (Լիսաբոնյան համաձայնագրի) հետ, թե ոչ: Ըստ ԵՄԱԴ-ի կարծիքի (opinion 2/13)¹⁷ նախագիծն ու լիսաբոնյան համաձայնագիրն անհամատեղելի են հետևյալ պատճառաբանությամբ.

1. նախագծով ոտնահարվում է ԵՄԱԴ-ի ինքնավարությունը,
2. նախագիծը ՄԻԵԴ-ին ԵՄ մայր օրենքի

քի դեմ վճիռների կայացման հնարավորություն է տալիս,

3. հնարավոր է դառնում ՄԻԵԴ-ում միանգամից և՛ անդամ երկրի, և՛ ԵՄ-ի դեմ հայց ներկայացնել, որի արդյունքում ՄԻԵԴ-ը կարող է մեկնաբանել ԵՄ օրենսդրությունը: Վերջինս, ԵՄԱԴ-ի կարծիքով, լեզգիտիմ չէ, քանի որ միայն վերջինիս է վերապահված ԵՄ օրենսդրության մեկնաբանության լեզգիտիմ իրավունքը,
4. ԵՄԱԴ-ը զրկվում է նախկինում ՄԻԵԴ-ի կողմից քննված գործերի վերաբերյալ վճիռ կայացնելու իրավունքից,
5. ՄԻԵԴ-ը ԵՄ արտաքին և անվտանգային քաղաքականության վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունք է ստանում, իրավունք, որը չունի ԵՄԱԴ-ը:

Սակայն, ոչ բոլոր դեպքերում է հնարավոր ԵՄ օրենսդրության հետ կապված և մարդու իրավունքների ենթադրյալ խախտում պարունակող դեպքերը քննել ԵՄԱԴ-ում: Ասվածի լավագույն ապացույցը, այսպես կոչված, Մեթյուսի քեյսն է¹⁸: Նախապատմությունը հետևյալն է. բրիտանական օրենսդրության համաձայն՝ ԵՄ խորհրդարանի ուղիղ անցկացվող ընտրությունները կարող էին տեղի ունենալ միայն Միացյալ Թագավորության տարածքում, մինչդեռ Ջիբրալթարը դրան հպատակ տարածք է: Այս հարցը չէր կարող լուծվել ԵՄԱԴ-ում, քանի որ ԵՄ խորհրդարանի ընտրությանը վերաբերող հարցերը կարգավորվում են Միացյալ Թագավորության անդամակցության վերաբերյալ համաձայնագրով, ինչը ԵՄԱԴ-ի համար մայր օրենք է, և ԵՄԱԴ-ը չի կարող փոխել այն, ինչպես օրինակ՝ սահմանադրական դատարանները, որպես կանոն, չեն կարող փոփոխել սահմանադրությունները, այլ միայն կարող են մեկնաբանել դրանք: Մինչդեռ ՄԻԵԴ-ի համար դա ընդամենը միջկառավարական համաձայնագիր է, որը ենթակա է փոփոխության, եթե հակասում է Մարդու իրավունք-

¹⁷ Opinion of the Court (Full Court) of 18 December 2014. Opinion pursuant to Article 218(11) TFEU. Opinion pursuant to Article 218(11) TFEU — Draft international agreement — Accession of the European Union to the European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms — Compatibility of the draft agreement with the EU and FEU Treaties. Case Opinion 2/13, available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62013CV0002>

¹⁸ App No 24833/94 (Application No) [1999] ECHR 12 (Other Reference) (1999) 28 EHRR 361 (Other Reference), available at <https://opil.ouplaw.com/view/10.1093/law:ihrl/2975echr99.case.1/law-ihrl-2975echr99>

ների եվրոպական կոնվենցիային (ՄԻԵԿ): ՄԻԵԿ-ը որոշեց, որ խախտվել է ՄԻԵԿ-ին կից առաջին արձանագրության երրորդ հոդվածը՝ Զիբրալթարի քաղաքացիների ազատ ու արդար ընտրությունների մասնակցելու իրավունքը: Արդյունքում, վերականգնվեց ջիբրալթարցիների՝ ԵՄ խորհրդարանի ընտրություններին մասնակցության իրավունքը: Իսպանիան փորձեց ԵՄԱԴ-ում վիճարկել Զիբրալթարի քաղաքացիների՝ ԵՄ խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունքը՝ հայց ներկայացնելով ընդդեմ Միացյալ Թագավորության, սակայն, ի վերջո, որևէ հաջողության չհասավ:

ԵՄԱԴ-ի իշխանության սահմանները

Իր պատմության ընթացքում ԵՄԱԴ-ը դրսևորել է, իրավամբ, պրոակտիվ վարքագիծ և, երբեմն, իրավական բառամթերքի հետևում թաքնվելով, ընդունել քաղաքական մեծ նշանակություն ունեցող որոշումներ: Եվրոպական ինտեգրման մեջ ԵՄԱԴ-ի ունեցած ձեռքբերումներն այնքան են ոգևորել հետազոտողներին, որ նրանցից ոմանք հենց ԵՄԱԴ-ն են դիտարկել որպես ինտեգրման հիմնական լոկոմոտիվ՝ ձևակերպելով «ինտեգրում օրենքի միջոցով (integration through law)»՝ ԵՄ-ին ներհատուկ միջազգային հարաբերությունների տեսությունը: ԵՄԱԴ-ը համարձակ է ու հզոր՝ անուղղակիորեն «ձեռնոց նետելով» ՄԱԿ-ի Աե բանաձևին, պարտավորեցնելով անդամ երկրներին ընդունել ԵՄ օրենսդրության գերակայությունը ներպետական օրենսդրության նկատմամբ, սոցիալական երաշխիքներ տալով մեկ այլ անդամ երկրի քաղաքացու և այլն, բայցևայնպես, ամենակարող չէ: Ինչպես արդեն նշեցինք, ԵՄԱԴ-ը չի կարող սահմանադրական նշանակություն ունեցող ԵՄ օրենսդրությունը, օրինակ՝ լիսաբոնյան համաձայնագիրը փոխելու հրահանգ տալ, ուստի հնարավոր է՝ ՄԻԵԿ-ի օգնության կարիքն առաջանա, ինչպես օրինակ՝ Մեթյուսի քեյսի դեպքում: ԵՄԱԴ-ի գործունեությունը սահմանափակում և խոչընդոտում է նաև այն հանգամանքը, որ ներպետական դատա-

րանները հաճախ ձեռնպահ են մնում նրան դիմելուց, թեպետ լիսաբոնյան համաձայնագրով պարտավոր են դիմել, եթե ներպետական դատարանի ընդդատյա գործը ԵՄ օրենսդրությանն է առնչվում: Ավելին, ի տարբերություն մի շարք երկրների սահմանադրական դատարանների, ԵՄԱԴ-ն իրավունք չունի սեփական հայեցողությամբ ներպետական դատարաններում քննվող կամ արդեն քննված գործեր ընտրելու՝ որոշելով վճիռների համապատասխանությունը ԵՄ օրենսդրությանը (cherry-picking): Եվ, վերջապես, ԵՄԱԴ-ի դատավորների վրա որոշակի լծակներ ունեն անդամ երկրների կառավարությունները: Վերջիններս կարող են պարզապես չվերընտրել իրենց համար անցանկալի դատավորներին վեցամյա ժամկետի ավարտից հետո: Ուստի, օրենքի և իրավունքի շնորհիվ, եվրոպական ինտեգրման խորացման «դափնիները» միայն ԵՄԱԴ-ին շնորհելը, գուցե, անարդար է, քանի որ էական դեր ունեն նաև եվրոպացու հոգեկերտվածքը, ինստիտուցիոնալ մտածելակերպն ու իրավահպատակ վարքագիծը:

Իսկ ինչ դասեր կարող է վերագրելից քաղել այն տնտեսական միությունը, որին նաև Հայաստանն է անդամակցում՝ Եվրասիական տնտեսական միությունը: Կարծում ենք՝ եթե ԵԱՏՄ երկրների առաջնորդներն ու հասարակություններն ուզում են էլ ավելի խորացնել ինտեգրումը, ապա միայն միջկառավարական մակարդակով դա կլինի ոչ բավարար, և վերագրված մարմինները՝ տվյալ պարագայում ԵԱՏՄ կոլեգիան և դատարանը, պետք է ունենան օրենսդրական գործիքներ մշակելու և դրանց արդյունավետ կիրառումը պարտադրելու համապատասխան գործիքակազմ: Մինչդեռ ԵԱՏՄ-ում տեղի է ունեցել հակառակ գործընթացն այն իմաստով, որ ԵԱՏՄ հանձնաժողովը, ի տարբերություն 2010 թ.-ին ստեղծված Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի Մաքսային միության հանձնաժողովի, այլևս չի կարող անդամ երկրների դեմ (Մինսկում գտնվող) դատարանում դատական հայց ներկայացնել¹⁹, և միայն անդամ երկրները

¹⁹ Dragneva, R., & Wolczuk, K. (2017). The Eurasian Economic Union. Deals, rules and the exercise of power, 3, p. 17.

կարող են միմյանց դեմ դատական հայցեր ներկայացնել: Այս պայմաններում միմյանց երբեմն ներհակ շահեր ունեցող անդամ երկրների որոշումները հնարավոր է՝ չբխեն Միության ընդհանուր նպատակներից՝ սասանելով Միության կայունությունն ու անդամ երկրների միասնա-

կանությունը: Հետևաբար՝ եվրասիական մայրցամաքում տնտեսական ինտեգրման խորացման համար հատկապես կարևոր է ԵՄ իրավական կառուցակարգերի ուսումնասիրությունը՝ վերջիններիս փոխառության նպատակահարմարության ու հնարավորության քննարկման առումով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. App No 24833/94 (Application No) [1999] ECHR 12 (Other Reference) (1999) 28 EHRR 361 (Other Reference), <https://opil.ouplaw.com/view/10.1093/law:ihrl/2975echr99.case.1/law-ihrl-2975echr99>
2. Consolidated version of the Treaty on the Functioning of the European Union PART THREE - Union Policies and Internal Actions, Title II - Free Movement of Goods, Chapter 3 - Prohibition of Quantitative Restrictions between Member States, Article 36 (Ex Article 30 Tec), <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A12016E036>
3. Dinan, Desmond., 2010. Ever Closer Union: An Introduction to European Integration. London: Red Globe Press, pp. 265-273.
4. Dragneva, R., & Wolczuk, K. (2017). The Eurasian Economic Union. Deals, rules and the exercise of power, 3.
5. Hodson, D. and Peterson, J. eds., 2017. The institutions of the European Union. Oxford: Ch. 7. Oxford University Press.
6. Joined Cases C-402/05 P and C-415/05 P: Judgment of the Court (Grand Chamber) of 3 September 2008 — Yassin Abdullah Kadi, Al Barakaat International Foundation v Council of the European Union, Commission of the European Communities, United Kingdom of Great Britain and Northern Ireland (Common foreign and security policy (CFSP) — Restrictive measures directed against persons and entities associated with Usama bin Laden, the Al-Qaeda network and the Taliban — United Nations — Security Council — Resolutions adopted under Chapter VII of the United Nations Charter — Implementation within the Community — Common Position 2001/154/CFSP — Regulation (EC) No 881/2002 — Measures directed at persons and entities included in a list drawn up by a body of the United Nations — Freezing of funds and economic resources — Committee of the Security Council established by paragraph 6 of Resolution 1267 (1999) of the Security Council (Sanctions Committee) — Inclusion of those persons and entities in Annex I to Regulation (EC) No 881/2002 — Actions for annulment — Competence of the Community — Joint legal basis of Articles 60 EC, 301 EC and 308 EC — Fundamental rights — Right to respect for property, right to be heard and right to effective judicial review), <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A62005CA0402>
7. Judgment of the Court (Grand Chamber) of 12 April 2005. Igor Simutenkov v Ministerio de Educación y Cultura and Real Federación Española de Fútbol. Reference for a preliminary ruling: Audiencia Nacional - Spain. Communities-Russia Partnership Agreement - Article 23(1) - Direct effect - Conditions relating to employment Principle of non-discrimination - Football - Limit on the number of professional players having the nationality of non-member countries who may appear on a team in a national competition. Case C-265/03, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A62003CJ0265>
8. Judgment of the Court of 14 July 1994. Paola Faccini Dori v Recreb Srl. Reference for a preliminary ruling: Giudice conciliatore di Firenze - Italy. Consumer protection in the case of contracts negotiated away from business premises - Availability in disputes between private individuals. Case C-91/92, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A61992CJ0091>
9. Judgment of the Court of 15 July 1964, Flaminio Costa v E.N.E.L., Reference for a preliminary ruling: Giudice conciliatore di Milano - Italy. Case 6-64, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A61964CJ0006>
10. Judgment of the Court of 17 December 1970. Internationale Handelsgesellschaft mbH v Einfuhr- und Vorratsstelle für Getreide und Futtermittel., Reference for a preliminary

- ruling: Verwaltungsgericht Frankfurt am Main - Germany, Case 11-70,
<https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A61970CJ0011>
11. Judgment of the Court of 19 November 1991. Andrea Francovich and Danila Bonifaci and others v Italian Republic. References for a preliminary ruling: Pretura di Vicenza and Pretura di Bassano del Grappa - Italy. Failure to implement a directive - Liability of the Member State. Joined cases C-6/90 and C-9/90. European Court Reports 1991 I-05357 ECLI identifier: ECLI:EU:C:1991:428, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A61990CJ0006>
 12. Judgment of the Court of 20 February 1979. Rewe-Zentral AG v Bundesmonopolverwaltung für Branntwein.
 13. Judgment of the Court of 20 September 2001. Rudy Grzelczyk v Centre public d'aide sociale d'Ottignies-Louvain-la-Neuve. Reference for a preliminary ruling: Tribunal du travail de Nivelles – Belgium Articles 6, 8 and 8a of the EC Treaty (now, after amendment, Articles 12 EC, 17 EC and 18 EC) - Council Directive 93/96/EEC - Right of residence for students - National legislation which guarantees a minimum subsistence allowance only for nationals, persons covered by Regulation (EEC) No 1612/68 and stateless persons and refugees - Foreign student who has met his own living expenses during the first years of his studies. Case C-184/99, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A61999CJ0184>
 14. Judgment of the Court of 4 December 1974. Yvonne van Duyn v Home Office. Reference for a preliminary ruling: High Court of Justice, Chancery Division - United Kingdom. Public policy, Case 41-74, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A61974CJ0041>
 15. Judgment of the Court of 5 February 1963. - NV Algemene Transport- en Expeditie Onderneming van Gend & Loos v Netherlands Inland Revenue Administration. - Reference for a preliminary ruling: Tariefcommissie - Pays-Bas. - Case 26-62, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A61962CJ0026>
 16. Judgment of the Court of 5 March 1996. Brasserie du Pêcheur SA v Bundesrepublik Deutschland and The Queen v Secretary of State for Transport, ex parte: Factortame Ltd and others. References for a preliminary ruling: Bundesgerichtshof - Germany and High Court of Justice, Queen's Bench Division, Divisional Court – United Kingdom. Principle of Member State liability for damage caused to individuals by breaches of Community law attributable to the State - Breaches attributable to the national legislature - Conditions for State liability - Extent of reparation. Joined cases C-46/93 and C-48/93, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A61993CJ0046>
 17. Opinion of the Court (Full Court) of 18 December 2014. Opinion pursuant to Article 218(11) TFEU.
 18. Opinion pursuant to Article 218(11) TFEU — Draft international agreement — Accession of the European Union to the European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms — Compatibility of the draft agreement with the EU and FEU Treaties. Case Opinion 2/13, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A62013CV0002>
 19. Reference for a preliminary ruling: Hessesches Finanzgericht - Germany. Measures heaving an effect equivalent to quantitative restrictions. Case 120/78, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TX-T/?uri=CELEX%3A61978CJ0120>

Альберт АЙРАПЕТЯН

*Старший исследователь исследовательского центра «Амберд»,
 Ассистент кафедры международных экономических отношений, АГЭУ,
 кандидат экономических наук*

МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

СУД ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА: ПРАВОВАЯ ОПОРА ЕВРОПЕЙСКОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ИНТЕГРАЦИИ

В данной статье рассмотрены показательные судебные процессы Суда Европейского Союза (СЕС), которые оказали значительное влияние на формирование и углубление евроинтеграции. Однако, для лучшего понимания правопорядка ЕС, во-первых, представлены особенности его законодательства и структуры СЕС. В заключении представлены и обобщены те факторы, которые ограничивают или препятствуют деятельности СЕС.

Ключевые слова: *Суда Европейского Союза (СЕС), правопорядок ЕС, переломные судебные дела, постановления директивы, Европейский суд по правам человека (ЕСПЧ)*

Albert HAYRAPETYAN

*Senior Researcher of «Amberd» Research Center,
 PhD in Economics, Assistant Professor
 in the Chair of International Economics, ASUE*

INTERNATIONAL LAW

COURT OF JUSTICE OF THE EUROPEAN UNION: A LEGAL PILLAR OF THE EUROPEAN ECONOMIC INTEGRATION

The article discusses the landmark cases of the Court of Justice of the European Union (CJEU), which had a considerable impact on the strength and deepness of European integration. However, to better understand the EU legal order, we will start with the presentation of the peculiarities of the EU legislation and the CJEU structure. The article was summarized by presenting the factors and circumstances that hinder and limit the power of the CJEU.

Key words: *Court of Justice of the European Union (CJEU), EU legal order, landmark cases, regulations, directives, European Court of Human Rights (ECHtR)*